

Այս փորձերով Թինտալ շատ լաւ կը բացատրէր՝ թէ ինչու գարեջուր չիտան՝ գարիի քամուքին մէջ կը ցանձ փրփուր (levure) գարեջուր չիտելու համար։ Եթէ կաւել (malt) ձգուի մթնաշուրթային փոշիներու ամեն գիպուածական ազդեցութեան՝ ինչ կ'ըլլայ։ Այս կը խմորի, բայց այնչափ գիպուածներու կրնայ ենթարկուիլ՝ որ թերեւս փառաքելի ազդեցնէ առաջ չգայ։ որովհետեւ փրփուրի սերմերուն հետ կրնան խառնուիլ ուրիշ շատ խմորներ՝ որոնք կրնան առաջ գալիք արդիւնքը սլալայել։

Թինտալ՝ տարիէ մը աւելի ամենամանր քննութեան ներքաւ քաղաքացու և ներքին իրերուն կենսական քննչութեան և ազդեցութեան վրայ։ Շատ անգամ յուսախար եղաւ։ այսու հանդերձ յաջողութեան ալ, ևս խորացնելէն ալ հանցք մի և նոյն ընդհանուր հետեւանքը՝ թէ ամեն խմորումն կամ փառքինն է արդիւնքը հակազդայի սերմերուն։

Այսքան փորձերէն ու փնտրելէն ետքը կրնանք կնքել յազմանական՝ թէ և փորձառական գիտութեան մէջ փառքեօտի և Թինտալի ապացուցած գրութիւնն է ամենատաղը և։ Դարձեալ։ և Այսքան իրողութիւններ տեսնելէն ետքը բոլորովին տարբերակ է պնդել՝ թէ բակտերիաներու կամ հակամանքներու (bactérie) խումբն ինքնանկենդան է և։

Ուրիշ ևս իրողութիւններն կամ փորձն չեն հաստատեր, այլ կը ձեռքեն եւ կը ցատապարտեն Այստեսութեամբ կամ ինքնանկենդանը։

ՓՈՐՁԱՌԱՎԱՆ մասին վրայ այսչափ։

Ուրիշ անգամ կը քննէք Բ. մասը, որ է իմաստասիրականն, այսինքն՝ թէ — Մարդկային մտաց համաձայն է Այստեսութեամբ կամ ինքնանկենդանը։

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ

1. Բողբոջած գարի, որ չորնալէն ետքը կը բաժնուի բողբոջներէն, և անո՞վ կը չիտուի գարեկոնին։
2. Հմտութ. Cosmos, t. XLIV, p. 39, 118.



ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑՑ

(Շարք տես էջ 303)

ԺԸ.

Վախճան Տրդատայ.

Թ

ՈՂԼՈՎ գտնենք, հանգերձ Գրիգորի ժամանակակից և ականատես գրիչներով, իր Որդւո՞վք և Թուամբք, իր աթոռայն անընդհատ Հարիւրաւոր յաղորդք, ամէն չին և նոր

Լուսաւորիչը քիչ շատ ճանչցողներով, կ'ուզեմ մէկ միայն անձի մի գգացումը քննել, եթէ հնար է. անձ մի՛ որոյ անունն և գործն, սիրան և հոգին՝ գրեթէ անբաժանելի էր անկէ և՛ իմանտն ամենքն ո՞վ է այդ անձն։ Բայց եթէ իր և Գրիգորի իրարու ծանօթութեան սկիզբն ելնենք, ո՞վ կ'ըրնար երեւակայել անգամ, թէ այն անձն՝ ատոգն, տանջողն, դուստապարտողն, զբրի մի մէջ երկար տարիներ քանտողն զնա, Տրդատ, ըլլար յետոյ ամեն անձէ աւելի յարգող, մեծարող, սիրող և գրեթէ սիրաշար Գրիգորի։ Որչափ այս գրութեան մէջ այլ յիշուեցաւ՝ թէ և սակաւ, կ'ըրնայ հաստատել ըսածս. ինչ խնամքով և փառք իրողակեց զնա ի կենսարիւս. ինչպէս նոյն կերպով տարաւ ի Հոռովմ և բերու. ինչպէս միշտ իր հետ տանէր և օգնէր՝ հեթանոս Հայաստանը քրիստոնեայ դարձնելու. ինչպէս անոր ձեռքով մկրտուելով յիշիրատ՝ մարմնով և հոգով իրեն վերածնեալ որդի կ'ըլլար, և միշտ իրեւ զՀայր և գերագոյն քան զՀայր ճանչնար, պատուէր և սիրէր. և գրեթէ ծնողասէր որդւոյ՝ աղու պէս՝ իր եւ տեւէն կ'երթար, փնտռէր՝ եթէ քիչ մի տանն չտեսներ զնա իր քով, ըլլայ յարգունիւն, ըլլայ ի բանակի զորացն, ըլլայ յեկեղեցիս, ի վանորայս և յանապատս. ինչ դժարութեամբ թողուց որ նա հրաժարի յաթոռայն և յաշխարհէ, իր տեղ թողլով իր հոգւոյ և մարմնոց ամենամօտ անձը (պԱրիստակէս). և ինչպէս անոր ի լերինս առանձնացեալ տեսններն այլ կ'երթար երբեմն գտնելու, և մէկտեղ ազօթաւոր և ճգնաւոր ըլլալու՝ զոնէ առ ժամանակ մի։

Իսկ ո՞վ կ'ըրնայ չափել այն հսկայ սրտին սրտիանքն՝ երբ հարկ եղաւ յետին անգամ բողբոջին իրմէ բաժնուիլ, երբ նա ծածկուեցաւ Այրս Մօսնայի Սեպուհի. թէ և հաւանական և թէ երբեմն երբեմն փորձեց այն ծածկարաններն այլ յայտնելու, և իր ծերութեան և յամանց ոմանց կրած հակառակութեան ցտաղ և ձանձրութեան միութարանք խնդրելու, իր վերջին տարիներում։ Բայց երբ այն ծածուկ ծակախեղ ծերակից և ալրից այլ փակուեցան, և Լուսաւորիչ յետ մահուանն անառիթ մնաց յամենեցուն, և ոչ եւս երեւէր, ոչ եւս գտնուէր, ինչ եղաւ

ինչ զգաց և կրեց այն հսկայ սիրտն Տրդատայ, — ինքն միայն գիտէ :

Տրդատ շատակեաց եղաւ և շատտասն : Այլակերպ աշխարհք մի անցաւ իր առջեւն : Նոր աշխարհք մ'ալլ բացուեցաւ իր դիմաց : շատ գործեց, շատ կրեց : երկար յոգնեցաւ այն մեծ հողին, և հանգիստը գտնէր միայն իր հողոյն հայրացեալ Գրիգորի գիրկը : որոյ հետ փափագէր մնալ այնուհետեւ թողլով թագն ու ամեն բան, մինչեւ որ մէկն կամ մէկ այլն իրարմէ առաջ մեռնէին : և եթէ Գրիգոր կանխէր ի մահ, անշուշտ փափագէր Տրդատ որ ինքն ալ չսպրի, ոչ յուսահատաբար անձին մնաստելով՝ ալ կենաց մէջ այնուհետեւ ցանկալի բան մի չգտնալով, բայց միայն իր Լուսաւորչին յիշատակը :

Թերեւս ոմանց անյարմար կամ վրայաճանախան ինչ երեւի՝ Գրիգորի և Տրդատայ նման մեծամեծ ֆանձանց՝ այսպիսի բացատրութիւն սիրելութեան : — սակայն ո՞վ մտած է անոնց սուրբ սրտին խորը, իրենց այնքան իրարու հետ՝ թէ Լուսաւորութենէն առաջ և թէ յետոյ՝ գործակցութիւնը չենեղու : կամ, միթէ նուազ է ընտանեկան և բարեկամական սէր Սրբոց մէջ՝ քան թէ աշխարհայինն և մարմնաւոր յաշխարհասէրս : Առջի յիշածներէս գուցէ աւելի զգալի պատմական նշմարք այլ կան մեր այս երկու վեհեց իրենց արժանաւոր սիրելութեան : Տրդատայ նոր թագաւորած ատեն՝ երբ Գրիգոր գերագոյն մտածութեամբ ուզեց անոր ծառայել, իրբեւ իր սպանիչ հօր (Անակայ) պարտքն անոր սպանեալ հօր (Խորրովու) հատուցանելու, առանց զնա ճանչնալու՝ Տրդատ հաւանած և սիրած է Գրիգորի գործունէութիւնը, և իրեն՝ իրբեւ անդարձ տուրք ընծայեր էր Այրաբատայ Կոտայից գաւառին մէջ Արամօճ կամ Արամօճն կոչուած գիւղը, որ ինչուան հիմայ ծանօթ է Արամօռն կոչուելով, և մեզմէ հազար տարի առաջ կաթողիկոս պատմիչն Յովհաննէս վկայէ՝ որ այդ տրդից վաւերական յետկարն ալ դեռ պահուէր : չըսէր ինչ լեզուով գրուած, ալ հաւանօրէն յունարէն : իսկ յետ Լուսաւորութեանն՝ մկրտութեամբ ի ձեռաց Ս. Գրիգորի՝ ինչ գանձեր նուիրած չէ գործելի : անշուշտ վերանշիւյալ Թորգան գեղն՝ ուր թաղուեցաւ Սուրբն և մեր-

ձուոր սահմանքն՝ մասն են Տրդատայ տրդից : բայց գերագոյն բան մ'ալլ ուզելով ընծայել, եթէ չէր կըրնար արքունի թագը տալ, վկայ տեսող պատմիչ մի՛ որ տուեր է անոր իր թագաւորական սուկեկապ մասնաւոր թէ ուկեծող պատմունանը կամ վերադրուին, այնքան թանձր և խիտ սուկեւուն՝ որ քղանցքը կամ փշէրը գետին դնելով՝ կանգուն կենայ եղբւր : և այս արդարեւ Տրդատական յիշատակն երկար դարեր պահուեր է ի գանձարանի կաթողիկոսաց :

Գրիգորի կողմանէ ալ անտարակոյս է նոյն զգացումն : աւանդուի որ, ինչպէս ի պատիւ Ս. Հովհաննիսի (և յետոյ ամեն կուսանաց) նուիրեալ՝ ժամպարոց Աստուած մեծ և հօգորեղն՝ ինքն Լուսաւորիչ յօրինած է, երեք կարճ տուն նուազ մ'ալլ « ի վերին օգնականութենէն » սկսելով, որ հին Տաղարանաց մէջ գտուի (և յոմանց Խորենացոյ կարծուի՝ առ Գլուս կաթողիկոս), Լուսաւորչին ըլլայ առ Տրդատ, և գրուածին իմաստէն գուշակուի՝ որ թագաւորին անգամ մի հիւանդութեան առթիւ յօրինուած և նուիրուած է : և այս շատ աւելի յարմար է քան Խորենացոյն համարին :

Ալ մեծագոյն եւս նշան, մանաւանդ արձան և մահարձան սիրոյ Տրդատայ առ իւր յատուկ և մեր ընդհանրական Լուսաւորչին՝ եղաւ իր Գերեզմանն առ Գերեզմանի նորա : Եթէ Գրիգորի մարմինն ի Պառնեղկայ գտուած և ի Թորգան տարուած ալ ըլլար, Տրդատ գիտէր որ այն տեղ պիտի թաղուեր նա, և ինքն ալ կուսկաւ (թէ զրով թէ անգիր) պատուիրած է՝ այդ ընդ մէջ մահու և անմահութեան կապով ալ կցուիլը Գրիգորի հետ : Գուցէ ի ատենի Ջեննի կայանի գերեզմանի Գրիգորի ի մայրաքաղաք իւր՝ Տրդատայ մարմինն ալ (հաւանօրէն զմրուած) տարեր թաղեր են ի Հոգեաց վանս, որպէս աւանդուի : բայց ոմանք ալ գրած են՝ թէ Գրիգորի հետ անոր որդւոց և Տրդատայ մարմինն ալ ի Կ. Պոլիս տարուած է : Այդ որպէս ալ ըլլայ, շատ է մեր ըսածն ի հաւատարմ քրիստոնէի և գերազանց սիրոյ ազգին՝ մեր երկու Լուսաւորչացն, զի և զՏրդատ՝ ինչպէս ի սկզբուն յիշեցինք, Խորենացին՝ խոր մտա-

ծելով՝ « մերոց լուսաւորութեանցն լուսատոր վերակացոյն » ճանշնայ և զրէ, որպէս և երկուքին համար այլ կ'ըսէ, « Խորհչին յա-
« զադս Աստուծոյ և ճգնազգեսցիկ լինել՝ զոյգ
« երկոցունց » :

Այսքան երկարաբանելուս պատճառն է՝ համարել որ արժանի է մտազրութեամբ ճանշնայ Տրդատոյ մեծ ոգին, որ ինչպէս մարմնոյ ուժով այնպէս և մտք զորաւոր էր ի քաղաքական տեսութեան, ինչպէս յառաջ այլ յիշուեցաւ, իր ճարտար վարմամբ ընդ հռոմէական ինքնակալութեան, և իր պատերազմական ճարտարութեամբ, անոնց համեմատ և վեհագոյն եւս էր հոգւոյն եռանդն և աստուածասիրութիւնն, որով յայտ մարդկան այլ դասակից է տօնելի Սրբոց և միով բանիւ իր սեփական կնիքն է յամենայնի մեծութիւն, ի խորհուրդս, ի զործս, ի զօրու-թեան և առատաձեւեմութեան :

Մէկ հատիկ ներթական նշխար իր մեծագուծեան մնայ կիսականգուն՝ Այլարատ աշխարհի արեւելակողման քարաբերանց գահաւանդի մի վրայ, որ և կընայ ըսուել միակ մնացորդ Հին Հայոց Թագաւորական ճոխութեան և ճաշակի, բայց ամենէն աւելի Տըրդատոյ նուրբ և վեհմ զգացման : Գիտեմք որ մեր եկեղեցին իրեն հետ տօնէ իր կինն Ալեքի թագուհի և իրենց զուտարը, խոսրովիդոյստ. սա մեր պատմութեան մէջ խորհրդական կերպարանք մ'ունի. չըսուիր թէ հարօնացեալ ըլլայ, այլ սիբիլական կուսութիւն մի կարծեցընէ. և գերագոյն եւս. զի երբ Հայրն և իր պաշտօնեալքն պատժուեցան յԱստուծոյ՝ յետ նահատակութեան Հռիփսիմեանց, թուի իմն թէ ասոնց հոգին այս արքայալուծ օրիորդին անցաւ, և ասոր յայտնուեցաւ յաստաւածուստ՝ որ Գրիգոր դեռ ողջ է ի զբրին, թող հանուի և ձեր ցաւոց ճար գտնէ : Յետ լուսաւորութեան ազգին՝ ուրիշ բան չի յիշուիր իր վրայ, բայց զի երբ Հռիփսիմեանց համար եկեղեցոյ գե-տինն փորուէր, Խոսրովիդուխան այլ իր գոգով կէրէ հողը, որպէս թէ իր երկանիկ քերց ծառայութիւն կամ փոխարէն մ'ընելու : Սըրբազան մեղամարգէի կամ մենասիրութեան շուք մի երեւի իր վրայ. և Տրդատ թախ-

անցելով իր քրոջ ախորժակոյց և զգացմանց՝ այն յիշեալ լերանց սրացեալ լուսնուռ գահաթան վրայ՝ յունական նուրբ և ճոխ ճաշակով շէնք մի կանգնեց, որ թէ՛ իր տեսածք կոշուի Սարատոյ Տրդատայ, և թէ՛ քրոջն՝ Հովսեփ խոսրովիդուխոյ. և թուի իմն՝ թէ ինչպէս աւանդուի, Տրդատ ի յիշատակ Հռիփսիմեանց՝ Մասիսու բարձրէն ութ մեծամեծ քարեր վրթուց բերաւ մինչ ի Վաղարշապատ, այս տեղ այլ խորաձորէն վերացուց կանգնեց այս վեցասուն երեսաքց, զոր արժան համարած է ստորագրել սրատես Խորենացին (Բ. Ղ). և ինչպէս ըսածէն գուշակուի՝ բաւական երկար տեսն աշխատանք շինուած է, և Նիկիոյ ժողովոյն ժամանակի մօտ « Կատարէ Տրդատ գլխուած Ամրոցին « Գառնոյ, զոր որաւքար և կոփածոյ վիտօք, « երկաթադամ և կապարով մածուցեալ. յո-
« բուժ շինեալ և Տաւն հովսեփ, մահաբաւ, « նօք, սքանչելի դրոշմածովք, բարձր քան-
« դակաւ, ի համար յեռ իտոյ խոսրովիդուխ-
« տոյ. զրեալ ի նմո գլխաւակ իտ հնչէ-
« ճացի գրով » . անշուշտ իր մեծագուծեան և քրոջն ազնուութեան պատշաճ գրուած մ էր, և կըրնանք նոյնպէս անշուշտ համարել՝ թէ Խորենացոյ տեսն գեռ կարգացուեր այդ անմահանալի յիշատակն. զի հաղարաւոր տարի վերջը, ի՞ժիշ քարու՝ Երեսնայ մեծ շարժին տեսն կ'ործանեցաւ. բայց այնչափ մեծամեծ նշխար թողուց քանդակներէն, որ հմուտ ճարտարագէտք վստահացան ձեւագրել ինչ որ եղած գուշակուէր : Գուցէ հետեւեալ նպատակն այսպիսի բաներ յիշելով, բայց ոչ յոգւոյ Տրդատոյ. որոյ՝ այս ազգային լուսաւորութեան պարագային մէջ Գրիգորի հոգեկից և զործակից ըլլալը շատ անգամ տեսնուեցաւ :

Հիմայ յետ տեսնելու այդ լուսաւորութեան արեգական ըստմարդկային բնութեան՝ ի մայր մտնելը, ստիպուիմք տեսնել և երկրորդ լուսատուին. որ և փափագէր Գրիգորի նման յառանձնութեան քարանձաւաց ծածկուելով՝ և միայն առ միայն՝ իր մեծ հոգին աւանդել առ Աստուած : Կըրցաւ մէկ երկու անգամ փորձել զայս՝ իր պայծառ արքունիքն ի խաւարի թողւով, բայց ստիպուե-

լով ի թախտնձանաց բարեկամացն և յ'սգոնէ
Հայատակացն՝ նորէն գտանալ յաթոռն, այլ
ոչ ի Հանգիստ: Հասեր էր ի խոր այլ արի
ծերտքիսն, ըստ պտոմջին. իր Հոկայական
կազմուածն՝ դեռ ստող և ուժով էր, և կոր-
ծեա՛ մահն չէր համարձակիր մտնեալ իրեն
քնական ճամբով . . . Էւ ի՞նչպէս Հասաւ,
դպրու, առաւ տարաւ . . . « Աստուծոյ ամուշեմ
« (և ես ընդ Խորենացւոյ) տակ զճշմարտու-
« թիւնն, մանուսանդ թէ զանօրէնութիւն և
« զամբարշտութիւն (տպերախայց ամոնց)
« սզգիւ մերոյ, և զմեծի ողբոց և արտու-
« ռուաց արժանի սոցա զգործս: Քանզի,
« զՀիտ առաքեալ կոչեն դեռ (յառնանձու-
« թեան վայրացն, խոտտանալով) լինել ըստ
« կամաց նորոյ »: Ի՞նչ էին իր կամքն. —
ինչ որ ուղիղեաց Ս. Լուսառերին. քրիստո-
նէ անուան արժանի կաննք. բայց, Գրիգորի
Հայրական Ֆայնին խառնէր Տրդատ և Հրա-
մայականն. զուցէ և իր Հոգւոյն ևսանդեան
Համեմատ պահանջէր ի Հպատակացն՝ առ-
տուածախրութիւն, Հանգերձ խառնալոսնու-
թեամբ, որոյ պայման մի է և պահգ պահելն,
որ այն ասին աւելի շատ և ծանր էր, և աչ
մի՛ այլ քանի մի քառասուն օրերով. և այս
անասանելի էր բազմաց, մանաւանդ զինուո-
րականաց, և կըրնայ յայսմ երկու կողմանէ
եւ չափազանցութիւն ըլլալ՝ նկատմամբ նա-
րադարձ ժողովրդեանն. ասոր կողմանէ թու-
լութեամբ, Տրդատայ խառնութեամբ: Բերնի
պահոց Հետ՝ անշուշտ ուրիշ իրաւացի պահ-
քեր այլ պահանջէր Տրդատ՝ իրեններէն. յո-
րոց ազատիլ կամ թուլցնել իսկապէս ին
պարկիրոց, և սպասէին թաղաւորին մա-
հուսն: Վերջապէս ունչամբերութեամբ ուզե-
ցին կանխել զայս. և բանաբար կտրել երկա-
րած կենաց թելը, զրգուած Սասանեանց
Շապուհ թագաւորին թելադրութենէն. Իմա-
ցաւ ծերն այլ զգաստ Տրդատ՝ որ չշուկ մի
կայ իր վրայ. բռնադատեց իր ոնեկապանը
որ յայտնէ. նա, վատ և անարի, վախճալով
զուցէ և կաշառուած՝ առ ժամի վանաց ծած-
կել գաւազանութիւնը, և իմաց տաւալ բանա-
արկուած, որը նայպէս վախով և այլ աւելի
վատութեամբ, նախ, որ մի որսի Հրաւիրե-
լով զթագաւորը, իբրեւ սխալմամբ նետը ի-
րեն Հասուցին և վիրաւորեցին, որ դարձաւ

յունկողին ընկաւ. իսկ այն սասանայապետն
քան ոնեկապանի իբրեւ վերջը պատել կ'ու-
զէր, իայց տեսնելով որ երկար պիտի դե-
մանայ Հրաւնչի և կամ տաղիւնայ, « ար-
« բուցանէ զեղ մահու և վախճանէ. որ յայտ-
« նի իսկ եղեւ ի նորին խորհրդակցացն,
« Էւ զայս արտերալ՝ (զաւանանացն) չիղու-
« ցին յիջեանց զրազմափայլ ձառագայքն
« աստուածապաշտութեան »: որ յառաջ և
յիտ լուսաւորութեանն՝ միանգամայն երկար
քան զամենայն ազգապետ մեր՝ « թագա-
«ւորեաց ամա յիտուն և վեց » կամ եօթն:
Չայս բռնադատութեն պատմելով Խորե-
նացի՝ որսին դառնութիւնը արժանապէս
թափէ այն մասնըչաց և խաւարասիրաց վը-
րայ, Տրդատայ Հետ իր և իրեն ընկերաց
վրայ Հասած Հալածանքն այլ ողբալով սրտա-
ուսչ և Հոգեհոգաց. զոր՝ թողում թէ ամբող-
թէ զգայուն սիրտ ունողաց կարգալ ի վերջ
ի գրոց պտոմջին (զլ. ՎԲ). զոր և թուի թէ
սրտին վրդովմանէն չէ կըրցած աւելի առաջ
տոնիլ, և կնքէ՝ նշանակելով, թէ « բովան-
« գակեցուն գիրք Բ, Յառաջագիտութեան Հա-
« յոյ Մեծաց »: Էւ արդարեւ, Տրդատու
դադրի յառաջագիտութեն Հայոց. որը այ-
նուհետեւ քաղաքականութեն չհասան երբեք
այն գերադայն կատարը՝ յոր Հասուց ամենայն
սարօք և իսուօք՝ անհամեմատն աննմանն և
միակն, Մեծն և Սորբն Տրդատ:

Յետ խոր Հուսաշանաց շունչն առնելու և
տալու, որպէս թուի տարիներով վերջը, դար-
ձած է պատմիչ մեր անգամ մ'այլ նայելու
ուր որ թողուց զՏրդատ, ի մահին մահու-
ն. և անկէ ինչպէս ի զազաղսն և իյնէ զյոգ-
որկաւորութիւնն. զոր՝ Համեմատ կամ փո-
խարեն իմն ապերախտից ըրածին՝ արժանա-
պէս և իսաւաւորապէս կատարեր են երախ-
տագէտը՝ որը քան զվատսն շատ և շատ աւե-
լի էին: Քանի մ'անգամ Հրատարակած ենք
այս կարճ բայց նշանաւոր յուղարկաւորու-
թեան նկարագիրը, որ և է առթիւ. իսկ այս
տեղ իբրեւ Մրրոյ մի մեծի՝ չենք ուզեր զա-
նալ՝ կրկնելու. թերեւ և ոմանց առաջին
անգամ ըլլալ կարդան և Հաւնիլն: Յետ կա-
տարելու եկեղեցւոյ օրինաւոր Հանգստեան
կարգն և օծութիւնը, « Բարձեալ տարան
« զնա (Սողոյ) ի Թորդան, արժարապատ

« գիակիր դագաղօք . յորում լծեալք չորիք
« ոսկեանձք (անտարակոյս ճերմակք, որ պա-
« տուական համարուէին քան զերիվարս) .
« և գունակ գունակ հանգերծիւք զդագաղսն
« զարդարելով . և վաշտք զօրացն աստի և
« անտի՝ վառեալք զինուք և նշանախօր . իսկ
« առաջի դագաղացն՝ ձայն աստուածօրհնու-
« թեան և բուրմունք խնկոց . իսկ աստի և
« անտի՝ բարեկամք և ընտանիք, և բազումք
« յորդոցն նորա՝ հետեւակ անկեալ . (պատ-
« մութիւնն միայն իր յալորդ Ստորովն յիշէ
« և ոչ այլ որդիս) . — և զկնի դագաղացն
« փողք և տաւիղք ողորք, և կոռսանք ողորա-
« սացք (գեռ հեթանոսական սովորոյթ), թող
« զայլ ամենայն ռամկեն, որ երթային զհետ,
« անքիս բազմաթեանք : Եւ այսպէս հասեալք
« ի տեղին, արարեալ տապան քաջառարական
« ի քարանց կնեաց, և ի վերայ ապակի ար-
« կեալ (թուի թափանցիկ բարակ քար մի,
« աւաքասոր՝ եթէ ոչ ստոյգ ապակի) : Յորում
« եղեալ զգանձն պատռականն, զանոշանոտ
« զպատարագն, զմեծ վատականադրն . և տա-
« րեալ թաղեցին զնա ի տեղւոյ սքոսանաց
« Մեծին Գրիգորի, զոր պարսպեալ (չորս
« դին պատ քաշելով) անուանեաց իւր պար-
« աւէզ : Եւ կանոնեցին զօր կատարման նորա
« (ըստ Յայմատուրաց նոյեմբ. 29) տօնէ
« ամ յամէ : Զոր յանձն արարեալ եպիս-
« կոպոսի գեղջն՝ գնացին» : — Ըստ ծանօ-
« թութեան կամ կանոնաց եկեղեցւոյ՝ այդ-
« պիսի մահուամբ վախճանողն Տրդատ՝ խոս-
« տովանդաց կարգէն համարուի, և արժանի
« տօնուելու : Այն Հին դարերում սովորու-
« թիւն էր տօնել զՍտորս՝ ուր որ վախճանած
« և թաղուած էին, զոնէ հանդիսաւոր տօնը
« հօն կատարել . ըստ այսմ յանձնուեցաւ
« Տրդատ՝ տեղւոյն զլիսաւոր եկեղեցականին,
« որոյ եպիսկոպոս ըլլալն գեղի մի, ինչպէս էր
« թորդաւ՝ թէ և բազմաթեան, վկայութիւն
« մի աւելցնէ բազմութեան եպիսկոպոսաց ի
« Հայաստան յաւուրք Լուսաւորչի և յետոյ :

Յիշեցինք վերը որ Տրդատայ մարմինն յետոյ
ուրիշ տեղ փոխադրուեր է . կ'ըսուի թէ և ի
Հոգեաց վանս, ոչ հեռի ի Վանայ :

Կնքելով այս մեր Լուսաւորութեան պատմ-
մութեան մէջ Տրդատայ յիշատակը, թողում
ընթերցողաց՝ ըստ չափու իրենց կարողու-
թեան և դատողութեան՝ անոր մեծութիւնը
չափել, թէ մեր և թէ ընդհանոր քաղաքա-
կան պատմութեան մէջ, և մանաւանդ եկե-
ղեցականին, քաղաքատեղով առաջինն իր ժա-
մանակի կէս զարու հոռմէականն ինքնակա-
լութեան հետ, երկրորդն՝ իր Մեծ Հայոց
երկրին և ասոր չրջակայ երկիրներու վիճա-
կին հետ . և թէ որքան յառաջնուն մեծ էր
յիշխեցողս աշխարհի կամ յազգապետս, ի
բաց առեալ զկոստանդնուսն, և որքան զօ-
րաւոր և արդիւնաւոր ի քրիստոնեայ պաշել
և պահպանել զՀայս . յոր մարդկօրէն տե-
սութեամբ՝ եթէ ինքն չէր բաւական առանց
Գրիգորի, միթէ և սա կ'ըլլար առանց Տրդա-
տայ այնպէս շուսաւոր : — Որքան մեծ և
մեծատարած եղած է համբաւ մեր Լուսա-
ւորչին, զայն յիշեցինք . կերպով մի և ոչ
պակաս և Տրդատայն . նա՝ երկնաւոր չնոր-
հօք, ստ երկրաւոր և երկնաւոր . յառաջ քան
զլուսաւորութիւնն՝ իբրեւ հսկայ և զիցացն
հռչակուիլը՝ զանտանս օրինակաւ, երգօք,
առակօք և առասպելօք, յիշեն յԱզարթան-
գեղոսէ սկսեալ՝ շատ պատմիչք մեր և զբիւր-
խիկ յետ լուսաւորութեանն՝ առաջին և վեր-
ջին կեանքն յիւրար խառնելով ինչուան հե-
ռաւոր աշխարհներ զորոյք և աւանդութիւնք
եղած են իր վրայ : Անշուշտ իր ուժին և մե-
ծութեան նկատմամբ՝ յօտարաց ոմն հնարեր
է ըսել, թէ հսկայն Տրդատ նախ ովկիանոսի
հսկայ ձուկը՝ կէտը (պալեմա) կերեր կամ ու-
տել սովորեցուցեր է : Ուրիշ մի, որոյ խառնակ
աւանդութեամբք զբաժն գտնուի յեթիով-
պիարէն լեզուի և ուրիշ օտար լեզուէ թարգ-
մանուած համարի, օտա տարիներու մի թարգ-
մանուած և ծանօթագրուած անգղիարէն, գեր-

1. Այս առոյց եղանակն յարմար չէ սովո-
րական որոշոյ, որոց առթիւ է Տրդատ, բայց
Հայաստան ունի ձմեռուան որսեր այլ թեւա-
ւոր կամ անթեւ : Յայտնի է որ հիմայ յամա-

բան կատարուի տօն Տրդատայ և կնիքն և
քեռն : Դարձեալ, յիշեալ սրբաբանութենէն մին-
չեւ ի մահն՝ կըրնան ամիսներ անցած ըլլալ :

մաներէն և փառնիքներէն¹, վիպասանութիւն մի Տրդատայ՝ ինչուան Հռովմայեցւոց Հետ բարեկամութեանն արուիրէն. Տրդակ անուանելով զվիպասանեալն, իր թագաւորական քաղաքն այլ Համարելով զԴավթի, Ս. Սարգսի յիշատակն այլ մէջ խառնելով. իբրեւ թէ իր մէկ զօրավարն ըլլար: Աւելորդ էր արդեօք յիշել զայսպիսին, եթէ չըլլային ազգակրցացոյ նոր առիթ և խրախոյս մի աւելի ճանչնալու յորդեւու պարծելու և պաշտելու զՄեծն այն, որ երբեմն ստուգագոյնն եղաւ զիւցականց Հայոց, յետոյ սրբազնագոյնն ի վեհազունս նոցա, և փառաւորեալն յերկինս ի դասակարգի սուրբ և խոստովանող թագաւորաց. որոց՝ ընդ Քրիստոսին՝ « ոչ զոյ թագաւորութեանն վախճան »: Չարժեք արդեօք և յիրկրի աւելի կերպով մի Հռչակել և փառաւորել զնա²:

Հ. Գ. Վ. Մ. ԱԼԵԽԱՆ

1. Յեանն Ժանօթագոյն. René Basset. Les Apocryphes Ethiopiens. IV, La legende de S. Têréag.

2. Արդ, ի վերջանալ յիշատակաւ Արշալուստոյ մերայ ներսէ՝ արդեօք յիշել իբրեւ երազ. մի 60 անցեալ ամաց, կամ իբրեւ զցնորս մանկութեան և անգիտութեան, եթէ այն կենաց դաշար և եռանցուն երիտաս որդւթեանն պահում՝ մտածէր ոմն զիւցաղներութեամբ կամ վիպասանութեամբ հռչակել զՏրդատ: Արդէն ողջածեն կամ ատաղձն կազմուած էր, և այն ժամանակի Հասուն քերթողի մի ցուցուած՝ նորս զատաստանն իմանալու և յորմէ չառաւ խրախոյս. բայց ինքն աւելի իր երկու մտմուռով եւ կեցաւ փափագէն: Մի, որ դժար երեւնար իրեն՝ Տրդատայ երկու կենաց (նախ հեթանոսութեան հրապարքն և ապա քրիստոնէութեան շնորհքը) համահասուար փայլեցնել, առանց յնչնացնելու առաջնոյն խատուտիկ տեսլիլ՝ երկրորդին լուրջ կերպարանօք: Նրկորդ, որ ինքն ինքնին վախցաւ իր երեւակայութենէն՝ զոր շատ դժար է ահմանաւորել այն կանաչ տարիներու մի ցնդեցաւ երազն. ջնջեցաւ ատաղձն: Բայց, եթէ հիմայ կամ երբ և է աղջոյնն ոք հանճարեղ՝ եռանդուն և խոհական, համարձակի հոմերոսեան իրադրոյն զայսպիսի երազ, զուցէ չի գտներ լաւագոյն նիւթ կամ անձն՝ քան զՏրդատ. միայն թէ իր բանաստեղծութիւնն այլ արժանաւոր ըլլայ այդ մեր ամենաբաժան Տրդատայ:

Օ Ս Ս Ի Ա Ն

Փ Ի Ն Պ Ե Ա Ն

—X—

Ն Ա Ն Ա Դ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

Կրուցայի ստուերը՝ զոր սպանեց Սաւրան՝ կ'երեւի Կոնայի, և կ'ը մարգարեանայ Կոչկոյի ժողովրդի մօտադատ պարտաւրեւը: — Կոնայ կ'արքեպիսկոպոս իրանապոս զօրադուխտ, որ կ'արձամարնէ ուրուսականին սպանալիքները: — Կը լուսնայ: — Սաւրան ամօրայի խաղաղութիւն մը կ'առաջարկէ: Կոչկոյի զատուսխան կոչ տայ պատերազմութիւն թայց ցեղապետի մը զարմուտի երկիրը՝ լուսնայ ի փախուստ կը խռնապեղծէ: — Կոնայ և Կոչկոյի կը պարտկեն եռանդը: — Իրկիւսան դեմ՝ հորիզոնին վրայ Փիւնցայի տորմիլը կը ելմարտի, թայց իսկոյն մեղքուո մէջ կը կորուսի: — Կոչկոյի, լայն իր պարտաւրեւան վրայ, զայն՝ իր թաղակալին՝ Փերդայի սպանութեան կը վերադրէ, զոր սպանած էր քիչ առաջ մեհմարտաւրեւան մը մէջ: — Կարրի յարդը գանկա կը քաշարէ՝ երգելով անոր Կոնայի և Գալուսիայի պատմութիւնը:

Ե Դ Կ Ի Ռ Դ Ե Ե Դ

Երկուսն ծեր կաղնիի մը տակ՝ կը քնանար Կոնայ՝ հեղեղատին ձայնէն որոշուելով: Քար մը՝ բարձի տեղ կը ծառայէր իր գլխուն տակ: Իրիշխային ուրուականն ըլլան սուր ձայները, Լեւոյի մացանդիւրուն մէջերէն, կու գային կը զարնուէին իր ա-

1. Տե՛ս ուր կը հանդիս Կոնայ Ժանօթ և ամեն անոնց՝ որոնք պարտած են Սկովտիոյ լեռները: Բարձր զանկալ բանականէն կը հեռացնէ, տեղւոյն առանձնութեամբ աւելի տար-տակ աղքեւու համար Արուգալի ստուերին երեւածին: